

պէտք է գնալ դէպի գործ և կատարել այս հաստատութեամբ մինչև վերջը. «Նրանելի էք դուք, տապ Տէրն, եթէ այս գիտէք և կատարում էք»: Ամէն.

(Բեր-իէնց).

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏՐԵՆԻ ԼԵՂՈՒ

• (Շարունակութիւն և լէրջ).

Թէ ո՞րքան կարևոր են այսպիսի նախադրութիւնները՝ Ինչպէս քերականութիւն սովորեցնելուց առաջ, հեշտ է հասկանալ, եթէ ինչպէս ինչպէս պէտք է սովորել տեղի ունեցած հին վէճերը հարեանցի յիշատակներ:

Մենք զարմանալի կերպով կարծում ենք, թէ գրաբարի քերականութիւնը կամ օտար լեզուի քերականական վաղ ուսումը (ռսերէնի, ֆրանսերէնի) մի և նոյն օգուտներ կարող է տալ, ինչպէս մեր խօսակցական կենդանի լեզուի միջնորդութեամբ առաջին քայլեր գործելը. սակայն պէտք է մոռանալ, թէ մատաղ մտքի համար դժբա շատ տարբեր հրահանգութիւններ են. երբ որ խօսակցական լեզուի քերականութիւնից ենք սկիզբ առնում, նորա բովանդակութեան զգալի մասը արդէն կանխաւ սովորած ենք լինում գործնական ճանապարհով, Իսկ եթէ զոր օր. լատինական քերականութիւն ենք սկսում սովորել, այն տեղ մեզ համար ամենայն ինչ նոր է: Մենք մեր խօսած լեզուով արդէն կարող ենք բաւական վարժութեամբ կարգաւ և գրել, դեռ ևս քերականութեան երեսը չը տեսած. իսկ լատինական նախադասութիւն կարգաւում համար՝ հէնց սկզբից հարկաւոր է նախ և առաջ քերականութեան տարբերքի ծանօթութիւնն ունենալ:

Միշտ աւելի օգտակար է, որ մի նոր լեզուի կանոնաւոր ուսումը այն հասակում սկսուի, երբ որ մանկան ըմբռնողական կարողութիւնը արդէն լաւ զարգացել է: Այդ ժամանակ լեզուն աւելի շուտ է ձեռք բերվում քերականութեան միջնորդութեամբ: Պատճառը պարզ է. Բեր-իէնց

էրեւելէն եւ արեւելէն չեմբելը որովհետեւ բազմաթիւ դէպքեր մի մի կանոնների տակ ընդհանրացնում է իսկ այսպիսի զբաղմունքը ակործութիւն է հասուն ըմբռնողական կարողութեան համար:

Տեսնենք, թէ որոնք են քերականութեան իսկական օգուտները, եթէ նա անժամանակ վաղ չէ սկսվում. որով միանգամայն կ'իմանանք և այն, թէ նորա ուսուցման ամենալաւ եղանակը ինչից է կախուած.

1) Տարակոյս չը կայ, թէ ուսման գլխաւոր նպատակը այն պէտք է լինի, որ վարժեցնէ քերականական կոշտ ու կոպիտ անպատեհութիւններից զգուշանալը. բայց դորա համար հարկաւոր չէ արուեստի այն բոլոր նիւթերը, որոնք այնքան առատութեամբ լցուած են ամենայն քերականութիւններում: Մենք տեսնենք, թէ առաջուպէ կրթութիւններով և ուրեմն առանց քերականութեան՝ բաւական դիւրանում է մի քանի սովորական կոպիտ սխալների ուղղութիւնը, ինչպէս որ է զոր օր. գոյականի և բայի երբեմնակի անկանոն կապակցութիւնը: Հարկաւոր է, որ այնպիսի նախակրթութիւնները խորհրդով ընտրուած լինէին, լեզուի ամենայն մասերից և միշտ իրար լրացնելով ու ամբողջացնելով: Յայտնի է, որ շատ բան աւելի փափաքէ ձեռք բերվում, քան քերականական կանոնները անդիր անելով: Միայն լսելիքի առաջնորդութիւնը կը կարողանայ զգուշացնել մի այսպիսի դարձուածքից, եթէ մանուկը ուզենայ ասել, թէ «հիւրերը եկել է»։ Բայց աւելի դժուարագոյն դէպքերը, զոր օր. միջակեալ բառերի պատճառով բայի անսովոր հեռաւորութիւնը իւր ենթակայից, հազիւ թէ հնար լինի բացատրել առանց քերականական անունների. այսպէս է հետեւեալ օրինակը «այն սենեակը, ուր որ հրաւիրուեցան բազմաթիւ հիւրեր, եւ ընդարձակ»։ Մի խօսքով քերականութեան մէջ հեշտը դժուարից պէտք է ջնկուի. դասագիրքը լիակատար քերականութիւն չը պէտք է լինի:

2) Քերականութեան մի օգուտը այն է, որ նորա միջնորդութեամբ ուսուցիչը հնար է ստանում, աշակերտի ուշադրութիւնը բացառելու լեզուի կողմը դարձնելու: Դեռ ևս շատ ժամանակ կ'անցնի, մինչև որ մեր ուսուցիչները սովորեն սկզբնական ուսման մէջ ճշգրտութեամբ որոշել իրագիտական և յատկապէս լեզուի դասերի սահմանները: Մեր աշակերտները միշտ աւելի իրերի բացատրութիւն են լսում, քան իրագիտական ծանօթութիւնից զատուած և անկախ լեզուի ուսմամբ են զբաղվում: Բայց որպէս զի աշակերտները և այդպիսի ուսումնասիրութեան ընտելանան, միայն մի հնար կայ—քերականութեան կանոնաւոր սուտում:

3) Մեր համաձայնութիւնը աւելի սովորեցնում է բառը բառի հետ համաձայնեցնել, քան նախադասութիւնը՝ նախադասութեան հետ: Են-

Թաղովում է, թէ այս վերջինը ինքնին ձեռք է բերվում, Մինչդեռ փորձը ամենադառն կերպով ցոյց է տալիս, թէ մեր աշակերտները շարագրել չը գիտեն և մինչև վերջը հայերենում դործ են ածում հոգևորական և ֆրանսիական կազմութեան եղանակները, ինչ որ նոքա կամ այդ լեզուներով գրուածքները կարդալով և կամ միւս առարկաների ու սուցիչների լեզուն լսելով՝ հետզհետէ արմատացնում են իրանց մէջ:

Նախադասութեան ուսումը շատ քիչ տեղ է բռնում մեր դասերում: Իսկ նորա ուսումնասիրութիւնը նորա կազմութեան, դասաւորութեան և անդամների ծանօթութեան կողմից, շատ պէտք է հեշտացնէ, որ մտքերի արտայայտութիւնն ու շարագրութիւնը ստանայ իր ճշդութիւնը և կատարուի վարժ ու թեթեւ կերպով: Վնասը մերը կը լինի մենք ուսուցիչներս կը տուժենք, եթէ նախադասութիւնները այսպէս չուսումնասիրել տանք: Ուրիշ ձանապարհ չը կայ, որ ոճի արուեստը յաջողութեամբ և շուտով ուսուցանուի: Քերականութեան մի պաշտօնն էլ ուրեմն այն պէտք է լինի, որ աւելի բարձր պարտաւորութիւններ յանձն առնէ, քան լոկ միայն սովորական սխալներից զգուշացնել և միայն սովորեցնել, թէ ինչպէս պէտք է համաձայնեցնել բառը բառի հետ:

Քերականութեան ուսման ժամանակ նոյնպէս անհրաժեշտ կաւոր է, որ նախադասութեանց համազօր ձևերը քննուին և համեմատուին, ինչպէս որ նախկինութիւններով պատրաստութիւն առաջարկուեցաւ: Միայն հին մահաշունչ քերականական լուծումը կարող է արհամարհել այդպիսի կենդանի քննութիւնը: Այս ասածները ինքնին պարզ են, բայց պէտք է աւելի որոշուին:

Երևակայե՛ք թէ մէկը դժուարանում է մի կարծիք՝ մի հաստատութիւն լաւ արտայայտել: Այս կարող է ծագել նախ՝ բառերի պակասութիւնից, իսկ երկրորդ՝ նախադասութիւնների կազմելու անվարժութիւնից: Այս վերջին դէպքերի նկատմամբ՝ մարդ ինչպէս է ստանում կատարելութիւն: Անտարակոյս մտաւոր երկար և մտադիր ընթերցասիրութիւնից՝ մասամբ ևս սովորութիւն անելով, որ պատահած նախադասութիւնները վերլուծէ, նոր ձևով բաղադրէ, պէսպիսացնելով փոփոխէ: Այս հանգամանքի կարեւորութիւնը ուսուցիչը պէտք է լաւ բմբռնէ և քերականական լուծում տալու ժամանակ այդ բաները սովորեցնէ, այսինքն լուծմամբ հասկացնէ բառերի փոխադարձ յարաբերութիւնը և պաշտօնը, արդեօք նոցանից որն է գլխաւորը և որը որոշիչ կամ երկրորդականը, արդեօք վախճանական նպատակի համեմատ՝ այսինքն ցանկացած իմաստը արտայայտելու չափով ճիշտ են, արդեօք համազօր ձևերից օրը աւելի է պատշաճում նոյն նպատակին: Այս վարժութիւններով աշակերտը կը պատրաստուի և այն վիճակի համար, երբ որ նա ինքը կեանքի մէջ հարկադրուած կը լինի

անձամբ շարագրութիւններ կազմել:

4) Վերջապէս քերարականական ուսումը հարստացնում է աշակերտի բառական պաշարը: Բառերի ծագման ուսումնասիրութիւնը՝ նոյնանիշների համեմատութիւնը՝ յիշողութեան գործը թեթեւացնում են: Բառակազմութիւնը, ածանցումը սովորեցնում են, թէ ինչքան հնարներ ունինք արտայայտութեան համար: այս մասը մինչև անգամ կարօտ է ուսումնական անունների, ուրեմն քերականութիւնից առաջ և շատ վաղ կարելի է ուսումնասիրել: Յանգերի փոփոխութիւնը, հոլով, խոնարհում, թիւ, սոքա էլ տպաւորութիւն են գործում մանկան հոգու վերայ: ուստի իրաւամբ առաջարկում են, որ դոքա մեքենական կրթութիւն չը դառնան՝ այլ համբերութեամբ սպասել, որ աշակերտները գործնական ճանապարհով իրանք զգան բառերի փոփոխութեանց կարեւորութիւնը և այնպէս ինքնին ջանան քննել և իմանալ համապատասխան կանոնները:

Փորձը ցոյց է տալիս, թէ ի զուր է փոքր մանուկին գրքով քերականութիւն ուսուցանել: Տասնութիւն տարեկան քերականութիւն սկսելն ապարդիւն կը լինի: Շատ են փորձել գործը թեթեւացնել, առաջ հեշտը սովորեցնել, յետոյ դժուար մասը, բայց դժուարութիւնը հէնց առաջին քայլում՝ դռան շեմքումն է: Բանի մասունքները այն ժամանակ հասկանալի են դառնում, երբ որ նոքա բոլորը և բոլորովին լոյս են սփռում մտքի մէջ: Ապա ուրեմն, մինչև որ աշակերտը չը հասկանայ, թէ ամենայն նախադասութիւն բաղկացած է ենթակայից և ստորոգելուց, թէ ստորոգելին լրանում է (սեռի) խնդրով և թէ ենթական, խնդիրն ու ստորոգելին երկրորդական բառերով աւելի որոշակի են սահմանվում: անկարելի է քերականութիւն սկսել, Բացի սոցանից, որքան հարկաւոր է, որ աշակերտը գաղափար ունենայ անհատականի, ընդհանրի և վերացականի մասին, ապա թէ ոչ նա չի հասկանայ գոյականի և ածականի բնութիւնը: Վերջապէս որպէս զի յարաբերական բառերի (գերանուանց, նախադրութեանց և շաղկապների) իմաստը ըմբռնէ, բառական սուր պէտք է լինի նորա մտածողութիւնը, իսկ այս ամէնը կախում ունի աշակերտի հասակից: Առ հասարակ ամենամիտ տնտեսութիւն է, երբ որ բնական հասկանալի-նից առաջ՝ ուզում ենք մի առարկայ ուսուցանել, քերականութիւնը թուաբանութիւնից դժուար է, և գուցէ նման է դրահաշուի և երկրաչափութեան տարեւրբին: Ուրեմն փոքր ինչ ուշացնելով սկիզբը, նա թէ աւելի հետաքրքրական զբաղմունք կը դառնայ և թէ աւելի շահաւոր:

Հապա ի՞նչ անենք մինչև այդ հասակը, ինչով լցնենք բաց տեղը:

միթէ աշակերտներին զբաղեցնենք միայն իրագիտութեամբ, եթէ քերականութեան դժուարութիւնները դարձեալ նոյն դժուարութիւններ են, ինչ որ տեսնում ենք ամենայն ուսումնական հրահանգութեան մէջ, այսինքն անխուսափելի հարկ, որ անշփոթ ըմբռնութիւն ընդհանրապէս ու վերջապէս գաղափարները, և որ կարողութիւն զօրանայ այդ բոլորը ճշդիւ արտայայտել ուսման արուեստական լեզուով:—այն ժամանակ դժուար է ճշդութեամբ որոշել, թէ կանոնաւոր քերականութեան համար նախապատրաստութիւնը ինչ պէտք է լինի: Նախ քան բանաւորական եղանակով լեզու ուսումնասիրելու, մենք կարող ենք շատանալ նորա լեզուի մասով և գիտնալ մասով: ինչպէս որ պարտաւոր ենք վարուելու միւս գիտութիւնների ուսումնասիրութեան ժամանակ և ինչպէս որ այս արդէն գիտենք իրազեանական դասերի նկարագրութիւնից:

Սորանով մենք կրկին դառնում ենք ուսուցչի մեծ պարտաւորութեան, որ պէտք է աշխատէ Բարձրագոյն Գիտելիքի բոլորովին անկախ իմաստից կամ գաղափարներից, այսինքն աշակերտներին վարժեցնել, որ նա համալոր նախադասութիւններ կազմեն և համանիշների ընտրութիւններ անելով բառերի պաշարը ընդարձակեն: Արդեօք այս գործով ուղղակի պատրաստում է քերականութեան կանոնաւոր ուսումը թէ չէ, թողնում ենք առանց քննութեան, բայց տարակոյս չը կայ, որ նա քերականութեան իսկական նպատակին մեծապէս օժանդակում է և շարագրելու կարողութիւն է տալիս: այսպիսի վարժութիւնները անպտուղ չեն մնայ, մինչև անգամ եթէ աշակերտները իսկական քերականութեան արուեստը ուսանելու ժամանակ չունենան:

Զոր օր. կարելի է հասկացնել և զգալի կացուցանել, թէ ամենայն նախադասութիւն ունի ենթակայ և ստորոգելի, առանց այսպիսի սոսկալի բառեր գործածելու: Որ և է հրահանգիչ նախադասութեան առթով կարելի է հարցմունքներ տալ. զոր օր Ողորդ ինչո՞ւ խորհանքի ենք, այս խօսքով ո՞ւմ մասին մի բան է ասվում: Աղուէսի մասին. «Ի՞նչ է ասվում աղուէսի մասին»: Թէ նա խիստ խորամանկ կենդանի է: Այսպէս պէտք է անուանել և մի քանի միասեռ առարկաներ, որպէս զի հասկացուի անհատի և դասի տարբերութիւնը, և թէ ինչպէս է կազմվում սեռի անունը կամ թէ ինչպէս մի վերագրի միջնորդութեամբ սեռը աւելի փոքրագոյն դասի է վերածվում (կենդանի. լուսնային կենդանի): Միայն այսպիսի տրամաբանական վարժութիւններով քերականութիւնն էլ տրամաբանական կրթութիւն կարող է դառնալ: Այսպէս կը պատրաստուի աշակերտը, որ այնուհետև սկսէ բանի մասունքները սովորել, նախ գոյականը սահմանել և նորա բաժանմունքները իմանալ, յետոյ միւսները: Աւերջապէս աշակերտը լաւ պէտք է հասկանայ գաղափարների շարակարգութեան

և տնտեսականության զանազանությունը, ապա թե ոչ նորա համար մոլորկը մնան յարաբերական դերանուններն ու շահկապները: մինչդեռ հարկաւոր է որ այդ բոլորը ամենայն պայծառութեամբ ըմբռնէ:

Եթէ ուզում ենք որ լեզուի դասերը լուրջ զբաղմունք լինին, չը մոռանանք, որ դորա համար հարկաւոր է հոգեղ կենդրոնացումն, մտաց ամփոփումն, և թէ երկու իրարից բացէիւրաց տարրեր ուսումնասիրութեանց մէջ՝ արագ արագ այս ու այն կողմը ցրուութիւնը կը մնասէ երկուսին էլ: Տարրական ուսման ամենայն դաս կամ ընթերցարանի, ամենայն հատուած երկակողմանի է: 1) իրագիտական դաս—մտքին բան հասկացնելու և մտքի մէջ բան տպաւորելու համար, 2) լեզուի դաս. իսկ այս վերջինն էլ իւր մասերն ունի ա) բանաւոր լեզու, բ) գրաւոր լեզու, գ) ընթերցանութիւն: Երկու տեսակ դասերը սկզբում միշտ զուգընթաց պէտք է զնան. լեզուի դասը ջոկ պէտք է լինի իրադիտականից, առանձին ժամեր պէտք է ունենայ, ապա թէ ոչ թերի կը մնայ դորա յառաջդիմութիւնը: Թէպէտ իրագիտական դասերի ժամանակ էլ լեզուն կազդուրվում է և նորա նիւթը յարմար աւելի կարող է լինել լեզուի վարժութեանց համար, բայց հէնց որ լեզուի վարժութիւնները սկսուին, իրագիտական ուսումը առ ժամանակ պէտք է դադարի և էլ մէջը չը խառնուի: Ընթերցարանի մի քանի մասերը իրագիտական հրահանգութեան համար շատ չեն յարմարում, մինչդեռ լեզուի հաստատութեան համար խիստ կարեւոր են: Այդպէս են բանաստեղծութիւնից և արձակ գրութիւններից այնպիսի քաղուածքը, որ աւելի քան ինքուր ճաշակ են զարգացնում: Պատշաճ դէպքերում անգիր սերտել տալն էլ լեզուի դասերին է յարմարում: — Երբ որ քերականութեան հասակը դայ, ուսման խնդիրը ինքնին կը լուծուի այսպիսի շփոթութիւններից: Քերականութիւնը գործնական գիտութիւն է, այսինքն ունի ընդհանուր սկզբունքներ, որոնք կանոններ են դառնում: Սղբա պէտք է համապատասխան դէպքերում իրագործուին, գործ դրուին (և ոչ միայն մեքենապէս անգիր անելու նիւթ դառնան) և ըստ այնմ բացատրուին: Փոխանակ ծուռը ճանապարհներ հնարելու, իբր թէ գծուարութիւնները մէջ տեղից բարձելու համար, ուսուցիչը պէտք է ուղիղ ճանապարհ բռնէ, ինչպէս որ լաւ քերականները ցոյց են տալիս: այսինքն պէտք է ամենայն մաս կարգաւ ուսուցանէ, որովհետեւ աշակերտները այն հասակում են, երբ որ արդէն կարող են ընդհանրացած մասնաւորել և վերացականը թանձրացնել: Բայց և այնպէս մի քանի հանգամանք առանձին պէտք է նկատուի:

1) Հարկաւոր է բառի փոփոխումները, հոլովը և խոնարհումը բանի

մասունքներից շատ սովորեցնել Գոյականի, դերանուան և ուրիշ մասերի սահմանը, դասակարգութիւնը և մեկնութիւնը կազմում են մի յատուկ գործ մտքի ըմբռնման համար, Բառի փոփոխումը բոլորովին Գործի հրահանգութիւն է մտքի համար, ուստի և աւելի լաւ է, եթէ առանց ընդհատման մի անգամ ընդ միշտ կարգով ուսումնասիրուի:

2) «Նախադասութեանց վերլուծութիւնը, շատ յետ է մնացել մեր քերականութիւններում: Նա թէպէտ մասամբ ցոյց է տալիս, թէ նախադասութիւնները ինչ անդամներից են կազմուած, հասկացնում է թէ այդ անդամներից ոմանք գոյականի, ածականի կամ մակդայի նշանակութիւն ունին և սոցա կատարեալ համադրներ են, բայց լաւ ըմբռնել չի տալիս, թէ ինչու մէկ է կայանում քաղ նախադասութեան կանոնաւոր կազմութիւնը, որոշող, բաւականների կամ լրացուցիչ մակդիրների ճիշդ բնութիւնն ու յարմար դասաւորութիւնը, որով քանի բառերը սկսում են մէջը աւելանալ, այնքան իմաստը աւելի պայծառանում է. իսկ այս մասը աւելի նշանակութիւն ունի շարադրութեան համար, քան քերականութեան միւս մնացած կտորները: Մէկ խօսքով շարադրութեան սովորումը և մեր քերականութիւններում, վերլուծել սովորում ենք, բայց ոչ համարել:

Մի երկու խօսք էլ ասենք բարձր դասարանների շարադրութեան մասին (ոչ միայն գրաւոր, այլ և բանաւոր կերպով ձևակերպութեան մասին), քերականութիւնը և ճարտասանութիւնը չ'յն չեն, քերականօրէն ձևացած մի արտայայտութիւն բոլորովին այլ բան է, քան պայծառ, հատուկ այնպիսի կամ աղդու խօսքը: Միով բանիւ քերականական ճշգրտութիւնը հասկացնելուց յետոյ՝ ոճի մասին էլ հոգացողութիւն պէտք է ունենալ:

Ճարտասանութիւնն էլ կանոններ ունի, որոնք պէտք է բացատրուին, հասկանալի դառնան և շարադրութեանց մէջ գործով ձևանան: Աշակերտները պէտք է գաղափար կազմեն, թէ ինչ են ընդհանրապէս ոճի սկզբունքները, և մասնաւորապէս՝ նկարագրական, պատմական, ճառագրական, ասեմբլանական և բանաստեղծական շարադրութեան ձևերը:

Սովորութիւն է նորաւարժ աշակերտներին շատ շուտ շարադրութիւններ գրել տալ: Բայց գորանով խախտվում է մանկավարժութեան մի մեծ սկզբունք, որ պատուիրում է՝ ամէն ժամանակ միայն մի զբաղմունք կատարել տալ: Իսկական շարադրութեան համար պէտք է ստեղծել եւ նիւթ եւ նիւթի արտայայտութեան ձև. միտքը երկու գիւտ պէտք է անէ: Բայց այդ դէպքերում արդէն ինքը առարկան աշակերտի ուշադրութեան կէսն է գրաւում կամ աւելի ևս, և ուրեմն քիչ աշարժութիւն է

Ինչպե՞ս է... Եւ եթէ շարագրութիւնը փոքր ինչ ընդարձակ է, ուր աշակերտները բնականապէս անթիւ սխալներ են գործում, որովհետեւ անմտադրութեամբ շտապում են մի կերպ վախճանին հասնել, անշուշտ ուսուցիչը անկարող կը հանդիսանայ այդ ամէնը մի առ մի կշռել: Կիսատ ստացած գործը՝ կիսատ սրբագրուած է դարձնում նա: Անհնարին է շարագրութիւններով ուսումը առաջ տանել և մի և նոյն ժամանակ հարկաւոր ուղղութիւններն ու քննութիւնը թերի չը թողնել: — Ուրեմն այդ հասկում գրութեան նիւթը լաւ յայտնի պէտք է լինի աշակերտին, իսկ գրութեան չափը՝ ոչ ընդարձակ, որպէս զի ամբողջ դասարանը միաժամանակ զբաղուի, ամէնքը սրբագրեն և ամէնքը բան սովորեն:

Շարագրութեան նպատակին ծառայող կրթութիւններով ամէնից առաջ պէտք է պարտադրել նիւթական մասը կամ առարկայի ծանօթութիւնը. ապա թէ աշակերտը պատուէր պիտի ստանայ, որ համապատասխան արտայայտութեան ձևն ևս գտնէ: Երբեմն կարելի է առաջարկել մի համառօտ ստուերագիր աւելի ճոխացնելու և ընդարձակելու, սակայն այս աշխատութեան համար էլ շատ անգամ հարկաւոր կը լինի բաւական նիւթական կամ իրագիտական ծանօթութիւն: — Լաւ վարժութիւն է բանաստեղծութիւնը արձակի դարձնել, բայց ավստո որ աշակերտը բանաստեղծական ձևը անողորմաբար մերկացնելուց յետոյ՝ էլ այնքան զօրութիւն և վայելչութիւն չի թողնում, որ մնացածից կարողանայ ընտիր արձակ գրուածք առաջացնել: — Աւելի լաւ վարժութիւն է, եթէ արձակ հատուածի ձևը՝ որ և է ճարտասանական տեսակէտի նկատմամբ և մի որոշ ծրագրի համեմատ՝ փոփոխութեան ենթարկուի, զոր օր. նկարագրական ոճեր մոծանել հատուածի մէջ կամ հանել միջից: — աւելորդ բառերին մի սահման դնել կամ համառօտութեամբ ձևացած հատուածը՝ աւելի ընդարձակորէն բարդաւածել: — նախադասութիւնները նոր նոր սկզբունքներով կազմել: — աւելի գաւառական բառերի փոխանակ՝ ընտիր հարազատ բառեր դնել, միով բանիւ բնարանի նիւթը այնպիսի ձևերով արտայայտել, ինչպէս որ լաւագոյն և պաշաճաւոր փոփոխութիւնը կը պահանջէ:

Այն բոլոր կանոններն ու վարժութիւնները, որոնց զօրութեամբ որ կազմվում են նոյնութեան և ընդդիմակոխութեան ոճեր, պէտք է շուտ շուտ կրկնուին: Նոյնութեան կարգին են պատկանում յարացոյցն ու նմանութիւնը: Իսկ ընդդիմակը կամ հակապատկերը միակ միջոց է խօսքին աւելի որոշ ձև տալու, հետեւապէս լեզուի պայծառութիւնը յաջողացնելու համար:

Մի ընդարձակ պարբերութեան մէջ նախադասութեանց իւրիւր լաւ սահմանել: — ամենամեծ և դժուարագոյն խնդիր է: Այս վարժութիւնը աւելի

կը յաջողուի ընթերցանութեան ժամանակ, եթէ այս կամ այն պարբերութիւն՝ մի առաջարկած սկզբան համեմատ՝ նոր և ընտիր դասաւորութիւն ստանալու յարմարութիւն ունենայ։ Ով որ կարողանում է լաւ պարբերութիւն կազմել, նա չի դժուարանայ մեծ ճառի մասերն էլ միացնել և առ հասարակ կարգաւոր ոճ բանեցնել։

Հարադրութեան համար ոչ մի վարժութիւն այնչափ նպաստաւոր չէ, ինչպէս արձակ և չափաբերական հատուածների գեղեցիկութեանց մասին հարցափորձ անել աշակերտներից, ամենայն հանգամանք մանր քննել և մեկնաբանել, նոցա լոյս ու ստուերը դիմացեղիմաց ցոյց տալ։ Այս դասերի ժամանակ աշակերտի ուշք ու միտքը բոլորովին կը գրաւուի արտայայտութեանց ձևերի զանազան հնարներն ու եղանակները քաջ դիտելու համար։ Գլխաւոր ջանքը այն պէտք է լինի, որ աշակերտի ոգու մէջ զարթնի լաւ և վատ շարադրութեան համար անվրէպ զգացմունքը։ Ոմանք կամենում են շուրջ գրել տալով ոճի լաւութիւնը սովորեցնել, բայց ամենից առաջ հարկաւոր է դիտել, թէ ինչու՞մն է կայանում գրութեան լաւութիւնը. մանաւանդ ի նկատի պէտք է առնուլ և այն, թէ ուսուցիչը վերջին հանգամանքով շատ օժանդակութիւն կարող է տալ, իսկ առաջին գործում անհամեմատ աւելի տկար կը հանդիսանայ։ Ուսուցիչը կարող է զանազան յօդուածներ կարդացնելու ժամանակ՝ աշակերտների աչքը հետզհետէ դարձնել ոճի գլխաւոր հանգամանքների վերայ, ինչպէս որ են՝ մեկնութիւն, յոժ, աշխուժութիւն, ազդուութիւն, լաւ օրինակներից նոքա կը սովորեն պարզութեան և ճապաղութեան, ուժի և զգացման տարբերութիւնները ճանաչել։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Լեզուի մասին ասելիքը վերջացաւ։ Այժմ կցում ենք մի յաւելում, որ իւր բովանդակութեամբ վերաբերում է թէ ինչու՞ն և թէ ինչնա՞յն դիտելի և որ միանգամայն այդ երկու յօդուածների լրումն է կազմում ինչպէս որ սկզբում յայտնել էինք։

Ուսուցչի դժուար խնդիրներից մէկը կազմում է այն դժուարութիւնը, որոնք ընթերցանութեան ժամանակ և դիպուածով պատահում են, բայց իսկոյն հասկանալի չեն դառնում աշակերտների համար։ Սա անշուշտ լեզուի խնդիր է, բայց իրազննական դասերի պայմաններով։ Զանազան եղանակներով փորձում են այս դժուարութիւնը վերացնել։ Մի քանի բառերի բացատրութիւնը բոլորովին անյոյս պէտք է համար-

ուի. Միւսների լուսաբանութիւնը կարող է դասից այնքան ժամանակ խելել որ աւելի լաւ է յետաձգել մինչև ուրիշ յարմարագոյն դէպքեր. քան ըստ առաջին պատահման ձեռնարկել. Թէ ի՞նչ է ելլուիւն, այս բառը ոչ մի կերպ չի բացատրուի. որովհետև դորանով մենք արտայայտուիմ ենք մեր հասկացումը. Իսկ հաւատարկը այսպէս ենք աւանդում. «Ս. Գիրքը սովորեցնում է. թէ կայ մի Աստուած. նորա անունն է՝ Հայր աստուած. Որդի աստուած. Հոգի Սուրբ աստուած. Մեր Տէր աստուած Բրիստոս պատուիրեց իւր աշակերտներին, որ աւետարանեն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Մեր պապերը հաւատացել են, թէ Աստուած մի է և երրորդութիւն է. մենք հաւատում և դաւանում ենք ինչպէս որ նոքա մեզ սովորեցրել են. դուք էլ պէտք է հաւատաք և դաւանէք նոյնպէս». Մի քանի բառեր ևս կարծես մի հարցմունք են պարունակում. բայց ելի՛ր պատասխան են պահանջում. և այդպէս էլ խնդիրը պէտք է բաժանուի. ապա թէ ոչ նենգութեան որոգայթ կը պատրաստուի. Յայտնի է նենգաւորներին տուած պատասխանը. Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ. — Կայ աստուած. թէ չէ. Թող ուսուցիչը ամենեւին չը տանախուի և պատասխանէ. թէ կայ. և դա է այն չարութիւնը մեր մէջ, որի դէմ որ անդադար պէտք է մաքառենք. իսկ միւսից դուրս՝ ուրիշ բաներից պէտք է զգուշանանք. նախապաշարմունքը դուրսն է ստեղծում. այն, ինչ որ մեր մէջն է բոյն դրել. Մենք ուրեմն կը խօսենք այն բառերի մասին, որոնք հասկանալի կարող են դառնալ դասերի ընթացքի ժամանակ, և կը թղտղենք բացատրութեանց զանազան եղանակները.

1) Եթէ հնար կայ դործ գնելու, ամենալաւ եղանակն է ցոյց տալ համապատասխան առարկան, ինչպէս որ Պետտալոցցին պահանջում էր. Ափսոս որ այդ եղանակը շատ քիչ դէպքերում իրագործելի է. Ուսումնարանի հանգամանքները նեղ են դորա համար. միայն կեանքի մէջ մանուկը անդադար պատահում է նոր նոր առարկաների և ցանկանում է նոցա անունները իմանալ. Ուսումնարանի համար միայն այս կարող ենք աւելացնել, որ շատ օգտակար է ունենալ պատկերներ, ձուլւածներ, մի փոքր թանգարան, ամենայն տեսակ ուսումնական պիտոյքներ, որպէս զի հնար ունենայ աւելի կենդանի կերպով բացատրել անունները.

2) Եթէ աշակերտին արդէն յայտնի եղած մի առարկայ՝ անծանօթ և անսովոր անուամբ է կոչվում, այն ժամանակ բաւական է որ առարկան յիշեցնուի, որպէս զի օտարոտի բառն էլ իսկոյն լուսաբանուի. Այս դէպքը անդադար կրկնվում է ուսումնական բառագիտութիւնը բաղմամբներու. Աշակերտը վաղուց ծանօթանում է թէ ինչ է Զերմութիւն, ցրտութիւն, Զուր, հողմ և լոյս այսպիսի պարզ ընտանի անուններով. և երբ որ առիթ

է գալիս աւելի ուսումնական արուեստի կամ մանագիտական բառեր գործածելու՝ մենք աշխատում ենք այն ընտանի բառերով համապատասխան հանգամանքները նկարագրել և այնպէս խմայնել նոր բառերի իմացումը։ Այս ձանապարհով կարելի է բացատրել, զոր օր. «սառուցեալ դօտի»։ «լուսեղէն շրջան»։ «ջրի գոլորշի» խօսքերը։

Բայց այս հանգամանքը որքան հեշտ գործածելի է թուում, այնքան մեծ գայթակղութեան պատճառ է։ Բառարաններում և գիտութիւններում շատ անգամ բաւական են համարում նոյնանիշներով պարզել բառի նշանակութիւնը, այսինքն բառը՝ բառով, Իսկ խնդիրն այն է, որ բառը՝ իրով բացատրուի։ Ապա թէ ոչ, մենք շատ անգամ հեշտ բառերը աւելի դժուարագոյն համադրներով ենք բացատրում, քան ընդ հակառակ։ Ձոր օր. «կշիռ» բառը՝ փոխանակ «քաշ» բառով հասկացնելու՝ թարգմանվում է «ծանրութիւն» բառով։ «արտում» բառի դէմ տրվում է «մըռայլ, թախծալից»։ «հոգացողութեան դէմ»՝ «կանխատեսութիւն», խոհանութիւն»։ «խելքի» դէմ՝ «բանաւորութիւն»։ Ել չը զարմանանք, եթէ շատ անգամ դժուարի դէմ նոյնչափ անհասկանալի բառ ենք կարգում՝ «մուրց» — «կռուի»։ «նենգ» — «ուտադրութիւն»։ «հակակայութիւն» — «ընդդիմութիւն»։ «միասնական» — «համադր»։ Սոյն կարգումն է և օտար բառերի անտեղի գործածութիւնը, ուր որ մայրենի լեզուի մէջ աւելի հասկանալի բառեր կան կոչուող, պէնդէպ, պէմբու, ֆլուորիս։

Այս բաւական չէ, թէ նոյնանիշներից մէկը այնքան անհասկանալի կարող է լինել, ինչքան և միւսը, որը որ իբր թէ առաջնի բացատրութիւն պէտք է դառնար, Հարկաւոր է մի ուրիշ հանգամանք էլի նկատի առնուլ։ Շատ քիչ կը պատահի, որ նոյնանիշ բառերը ճիշդ նոյն լինին իրանց զօրութեամբ։ Նոցա մէջ նրութիւններ կան, երբեմն շատ նշանաւոր զանազանութիւններ, եթէ ամէն տեղ ուղենանք «արդի» բառը «Ժամանակակից» բառով փոխանակել, «զուգընթացը» — «զուգահեռականով», «հինը» — «վաղեմի», «ծեր», «նախնի» բառերով, շատ անտեղութիւններ կը ծագեն։ Հին (անյառաջադէմ) փիլիսոփայ, ծեր փիլիսոփայ, նախնի փիլիսոփայ — նոյն բաներ չեն։ Հին ազգեր — երկու տարբեր գաղափարներ է յայտնում, թէ մինչև մեր օրերը ապրող ազգեր և թէ միայն վաղ ժամանակներում ապրող ազգեր։

3) Փոխանակ բառը թարգմանելու իւր նոյնանիշներով, պէտք է բառի էությունը նկարագրելով մեկնել։ Եթէ նկարագրութեան մէջ անհասկանալի բառեր չը կան, բացատրութիւնը ապարդիւն չի անցնի։ «Հին դար» նշանակում է մարդկութեան վաղուցուայ ժամանակներ, մանաւանդ որոնք Բրիտանոսի ծննդեանից առաջ են ընթացել։ Այս տեղ կատարվում է մանկավարժութեան այն սկզբունքը, թէ յայտնի ծանօթութիւններով պէտք

է անյայտները ծանօթ դառնան. «բարեխառն» — ոչ տաք է և ոչ ցուրտ, այլ այդ երկուսի միջին վիճակ. «զուգակշռութիւն» — մի հաւասարութիւն, որ ոչ մէկ կողմը և ոչ միւս կողմը առաւելապէս չի ծանրանում: Եթէ աշակերտները որ և իցէ ղեկավարուած հաստատութեան՝ զոր օր. ընտանեաց կամ պետութեան՝ էութիւնը ըմբռնում են, կարելի է նոցա հասկացնել և այն զանազան անունները, որոնք գործ են ածվում նման հաստատութիւնների համար: Այսպէս կարելի է բացատրել ազգերի ծայրագոյն իշխանութեան անունները՝ կայսր, սուլթան, շահ, նախագահ, խղի, խան, եթէ կառավարութեան գաղափարը արդէն անյայտ չէ:

Այս եղանակը կը վիրալի, եթէ մի մասը կամ ընդհանրապէս տարրական հասկացողութիւնները մոլթ են. «Մենավաճառութիւն» հասկանալի չի լինի, մինչև որ ճշդիւ ըմբռնելի չը դառնայ առ և սուրի գաղափարը, և ոչ «եկամուտ» բառը, եթէ տնտեսագիտական և ուրիշ ուսումնական տեղեկութիւնները պատրաստ չեն գտնվում: «Լնքնագործութիւն» ամենեւին մատչելի չէ առաջին բաժանմունքի մանկան խելքին: «Քաղաքակրթութիւն» ուշ իմանալու գաղափար է, որովհետև հարկաւոր է պատմական և ընկերական գիտութիւններից կանխաւ մի շրջահայեացք ունենալ:

Կան բառեր, որ շատ նշանակութիւն ունին, մինը դժուար քան միւսը, և պարզից սկսած մինչև ամենամթինը: «Ծանրութիւն» նախ նշանակում է ուղեւոր, ապա և նիւտոնի յիշուհով օրէնք: «Խորհուրդ» նշանակում է նախ պարզապէս ծածուկ բան, յետոյ աւելի անզգայի կամ նիւթապէս ըմբռնելի բան, և վերջապէս մի անիմանալի ազդու՝ որ խառն է երկիւղածութեան և վեժական զգացմանց յետ: Եթէ այսպիսի բաղմանշանակ բառերը գործ են դրուած իւրեանց պարզագոյն իմաստի համեմատ, ուսուցչի խնդիրը դժուար չէ, նա իւր բացատրութիւնը կարող է սեղմել առաջիկայ պետքի չափով: Եթէ «պատճառաբանել» բառը պատահում է իւր սովորական իմաստի համեմատ, որով նշանակում է թէ պէտք է ի հաստատութիւն առաջ դնել մի հիմք, մի պատճառ կամ ապացոյց, այն ժամանակ կարեւորութիւն չունինք ընդարձակօրէն մեկնել նոյն բառի դժուարիմաց նշանակութիւնը: Ինչպէս որ, Կանտի «փիլիսոփայութիւնը վարդապետում է այդ մասին:

Ի՞նչպէս պէտք է վարուի ուսուցիչը մի քանի բառերի երկդիմի իմաստը հասկացնելու համար: Լաւ գրուածքի մէջ արդէն նիւթի բովանդակութեան կապակցութիւնից պարզ երևում է երկդիմութիւնը: Շարունակ ընթերցանութիւնը երկու հետեանք է առաջ բերում. կարգացողը մի կողմից սկսում է զգալ երկդիմութիւնը, միւս կողմից յաղթել և իմանալ նորա նշանակութիւնները: Այդ գործը մեծամեծ վարժութիւններ է պահանջում և հարեանցի թեթեւ բացատրութիւնները օգուտ չեն տայ, բայց ի

Հարկէ վնաս չը կայ, եթէ յարմար գէպքերում աշակերտը հարցափորձի ենթարկուի և համար ու հաշիւ տայ իւր կարգացածների մասին, և ի հարկէ այս այն չափով, որքան որ նա պատեհ է ունեցել մի բառ իւր զանազան նշանակութիւններով ուսումնասիրելու, և որ չափով որ առարկաները նորա ըմբռնողական կարողութեան համապատասխանում են:

Կ) Նկարագրական իմաստով գործադրած բառերը ուսուցչի բացատրութեանց մեծ առիթներ են: Այս բանում նա կարող է շատ նպաստել աշակերտներին, միայն թէ կարգով ուղենայ գործը առաջ տանել, եթէ նկարագիրը շատ անգամ կրկնուելու պատճառով արդէն կորցրել է իւր պատկերական և յարացուցական բնութիւնը և դարձել է իրի սովորական անուանակոչութիւն, այլ ևս կարեւորութիւն չը կայ որ նա առանձնապէս բացատրուի: Լեզուով դուրս ժամը դուրս ելաւ, կործմ սիրտը չի սաղանայ, ամբողջը ուրեքն էր, այսպիսի ընտանի դարձուածքներ ինքնին հասկանալի են: Աւելի այն նկարագիրները պէտք է վերլուծուին աշակերտներին հասկացնելու համար, որոնք փոխաբերական և աւելի լայն նշանակութիւն են ունենում: «Աշտերի ծառ», բազմութեան սրտամտութիւնը ծառայող, «կեանքի ուրախ», «պէտք արիւն», «հեղուկութեան» Արաքսը — այսպիսի խօսքերը անակնկալ տպաւորութիւն են գործում, եթէ առաջին անգամ են ականջին հասնում: և այսպէս զարթած հետաքրքրութիւնից օգուտ պէտք է քաղել, որպէս զի այլաբանական նկարագրութեան նշանակութիւնը մաքի մէջ գրողմուի:

Ե) Աշակերտը մի ընդունակութիւն ունի, որից որ ուսուցչինները շատ անգամ չը հասկանալով չեն օգտւում: Մանուկը բնականապէս սկսում է մի բառի նշանակութիւնը հետզհետէ իմանալ, քանի որ նա ծանօթութեանց բաւական պաշար է հաւաքում և լեզուի գործածութեան զօրութիւնից սկսում է ամենայն լսածը արդէն բաց մտքով ըմբռնել: Սա մի մակածական գործողութիւն է, որ ինքնին կատարվում է մանկան ոգու մէջ: Եթէ մի անսովոր բառ ենք լսում, շատ անգամ կարողանում ենք մտքի կապակցութիւնից մոտաւորապէս գուշակել, թէ նորա հաւանական նշանակութիւնը արդեօք ինչ պէտք է լինի: Մէկը մի բանով մեղանչել է և այդ պատճառով սաստիկ «յանդիմանուել» է: Մանուկը հասկանում է, թէ ի՞նչ է նշանակում մեղանաչել, ուստի և իւր փորձերի համաձայն հաւանական է գտնում, թէ մեղանչութեան հետեանքը անշուշտ մի պատիժ պէտք է լինէր: Այլ թէ իրօք ինչ է հետեւել, այն յատկապէս պատիժ անունով չէ կոչուած գրքի մէջ, սակայն երևի թէ պատժի նման մի բան պէտք է լինի: Թերեւս անյայտ բառը ուղում է իմացնել «ծեծ», կծու խօսք կամ բարկութիւն»: ինչ որ փորձերը առ հասարակ մեծերից այդպիսի գէպքերում ստանում են: Առ ժամանակ այսպիսի կիսատ գուշակութիւնից յուզուած

միտքը գոհ է մնում: Երբ որ նոյն խօսքը երկրորդ կամ երրորդ անգամ է պատահում, զոր օր. մի լրագրագետ յանդիմանում է քաղաքային վարչութեան գործքերը, մինչդեռ վարչութիւնը ակելի գովեստի է արժանի, քան յանդիմանութեան: մանկան միտքը այսպիսի նորանոր գործադրութեանց ազդմամբ պէտք է բացուի և մակածական եղբակացութեան գայլ թէ յանդիմանութիւնը փոքր ինչ տարբեր բան է, քան սոսկ պատիժը, թէ նա մի առանձին տեսակ տագնապիչ սաստ է, որ մեծաւորներին ևս կարող է հասնել, այն ևս լեզուի և խօսքերի միջնորդութեամբ:

Բառի նշանակութեանց կամ նոցա հաւանական իմաստի ընազդարար գուշակութիւնը, որ կատարվում է զանազան դէպքերը շարունակ իրար հետ այսպէս համեմատելուց յետոյ, շատ վաղ է սկսվում և տևում է մինչև մեր կեանքի վերջը, Բայց պէտք է լաւ հասկանանք այն հոգեկան վիճակը, երբ որ կարող է մի այդպիսի գործողութիւն գիւրութեամբ ընթանալ: Մի ասութիւն գէթ է՝ «Բնական հասկանալի պէտք է լինի. եթէ այդպէս է, այն ժամանակ ինքնին կը լուծուի նորա մէջ հանելուկ մնացած անծանօթ բառի էական իմաստը, եթէ ուսուցիչը նկատում է, թէ աշակերտները ճգնում են լուծել մի այդպիսի նախադասութեան իմաստը, նա կարող է այսպէս օգնութիւն տալ. «Բանակը շարժուեցաւ դէպի յառաջ, թշնամու հետ կռիւ սկսելու համար, իսկ իւր աղխը թողուց վերջապահ զօրքի հսկողութեան ներքոյ»: «Եւ նշանակում է լաւ քանակ: Դուք տեսնում էք, թէ նա բանակի կարևոր պարագաներից է, բայց ոչ անմիջապէս կուռելու ժամանակ գործածելու համար: Ի հարկէ մի դասում մակածութիւնը չի վերջանայ. բայց ուսուցիչը պարտաւոր է մի քանի դէպքերից օգուտ քաղել, մինչև որ մակածական գործը վերջապէս լրումն ստանայ:

6) Ցարակոյս չը կայ, թէ ծանրակշիւ բառերից ու խօսքերից շատերը յիշատակուած եղանակներով ընաւ չեն լուսաբանուի: Չգողական զօրութիւն, մանգնիսի բւեռամիտութիւն, եթերի թրթռումն, քիմիական խնամութիւն, տրամաբանական շրջում կամ հակադարձութիւն, ձևական կարգ, քաղաքակրթութիւն, դիւանագիտութիւն, սահմանադրութիւն, գեղեցկութիւն, խորհրդական նշան և ուրիշ այբգիսի բառերից իւրաքանչիւրը՝ առանձին դասերի մի մի ընաբաններ կարող են լինել, կամ թէ այն գիտութիւններին յատուկ եղանակով պիտի բացատրուին, ուր որ դժբա իրանց ընութեամբ պատկանում են: Բայց շատ անգամ այդ բառերը խիստ ուսումնական մոքով գործադրած չեն պատահում, ուստի և կարևորութիւն չը կայ նշանակութեանց իմաստը ամենայն մանրակրկիտ նրբութիւններով որոշել: «Ըստ զօրութեան սահմանադրութեան» հասկացնել կարելի է մի հարեանցի ակնարկով, թէպէտ այդ խօսքը իրաւաբանական

արուեստին է պատկանում: «Բնութիւն» բառը շատ դժուար հասկանալու նշանակութիւն ունի: սակայն պէտքի դործադրութեան չափով կարելի է երբեմն պարզել: Ուսողիչը պարտաւոր չէ ամենանուրբ կերպով սահմանել այդ բառերը, երբ որ դէպքը այդքան չի պահանջում: Դասադրքերի մեծամեծ սխալներից մէկը այն է, որ նոցա մէջ չի որոշվում՝ դէպքի համեմատ բացատրութիւնը — լիակատար բացատրութիւնից: Ընթերցարանները երբեմն այն տպաւորութիւն են գործում, իբր թէ ծանրակշիռ բառերի բացատրութիւն տալը նոցա դիւատար նպատակն է. նոքա ուրեմն քառեր են դառնում: Ընթերցանելի հատուածներից լաւագոյնը այն է, որ բովանդակ տալով չի մոռնում այն տեսակ կապակցութիւններով է հիւստում, ուր որ մասերի նշանակութիւնը անմիջապէս հասկանալի է դառնում իրարու փոխադարձ յարաբերութիւններից: Այն մասերը որոնք ինքնին պարզ են, պէտք է լոյս սփռեն մութ տեղերում, և ոչ թէ յանկարծակի խօսքի ընթացքը ընդհատուի, որպէս զի մի բառի նշանակութիւնը թարգմանաբար մէջը մոռնանուի: իբր մի տղեղ կարկատան:

Կան կիսահասկանալի բառեր, որոնց բացատրութիւնը աւելի լաւ է դասի վերջը տալ, քան դոցա պատճառով դասը ընդհատել: Չոր օր. Ветеранъ, — այն վաստակաւոր զինուորը, որ երկար ժամանակ զէնքով ծառայել է և այնքան փորձառութիւն և ոյժ ունի, որ դեռ էլի պիտանի է պատերազմելու (հակառականիշ՝ Реврутъ — նորակոչ զինուոր): Ополчение, — աշխարհաբանակ, այսինքն այն զօրքը, որ պետութիւնը աշխարհքի ամենայն կողմերից կոչում է ամենամեծ տաղնապի ժամանակ և նորանից կազմում է օգնական բանակ (հակառականիշ՝ Регулярное войско — կանոնաւոր զօրք): «Ետախաղաց» — յետ դնալ փոխանակ յառաջ գնալու, հակառակ է՝ յառաջդիմութեան: «Չրամբար» — աւազան, որի մէջ ժողովում են ջուր — հարկաւոր ժամանակ դուրս թողնելու համար: «Կեղծաւորել» — ձեւանալ իբր թէ ենք այն, ինչ որ չենք, և այն դիտաւորութեամբ, որպէս զի մոլորեցնենք ուրիշներին և այլն:

7) Խիստ օգտաւէտ է, որ իրար հետ կապ ունեցող բառերը խմբով բացատրուին: Ամէն մի ուսումնական բաժին նշանաւոր բառեր ունի, որոնք իրար հետ առնչութիւն ունին: Հէնց որ սկսում ենք երկրաչափութիւն ուսանել, մենք իմանում ենք, թէ ի՞նչ է կէտ, գիծ, կորագիծ, եռանկիւն, քառանկիւն, բոլորակ և այլն: Եւ որովհետեւ դոքա սերտ միութիւն են կազմում, ուստի դոցա մասնաւոր նմանութիւնները կամ ներհակութիւնները և կանոնաւոր յարադրութիւնը՝ հեշտացնում են իրանց իւրաքանչիւրի մասին սահման տալը: Իսկ եթէ ընթերցանութեան ժամանակ յանկարծ պատահի միայն մի բառ՝ զոր օր. զուգահեռական ձև, բաղմանկիւն և այլն՝ բացատրութիւնը բաւական կը դժուարանայ:

Ուրիշ դէպքերումն էլ մի և նոյն է պատահում: Նաւի մասին խօսող հատուածի մէջ՝ շատ են լսվում այնպիսի անսովոր անուններ, որոնք աւելի հասկանալի են դառնում, եթէ մի անգամ ընդ միշտ գաղափար տրուի նաւին վերաբերեալ բոլոր հանգամանքների մասին:

Կան մի քանի այնպիսի պարապմունքներ, որ ժողովրդեան աւելի ծանօթ և սովորական են քան միւսները, ուստի և առակաւոր և այլասացիկ խօսքերում շատ անգամ յիշատակվում են: Այդպէս են՝ երկրագործութիւն, որմնագործութիւն, վաճառականութիւն, մինչև անգամ պատերազմական սպասաւորութիւն և այլն: Սղքա ամէնքը արուեստական անուններ ունին, մանաւանդ դաւառական բարձրանքով: Թէպէտ այս բառերն էլ մակածական եղանակով հետզհետէ ուսանում ենք: Բայց գործը շատ աւելի կը կարճանայ, եթէ մանուկը զոր օր. զինուորական հանգամանքների մասին մի անգամից տեղեկութիւն ստանայ, որպէս զի գրքի մէջ անդադար պատահող պատերազմական գործքերի նկարագրութիւնները՝ առանց դժուարութիւն պատճառելու հասկանալի դառնան:

8) Այս բոլոր նկատողութեանց նպատակն այն էր, որ պատահական բացատրութեանց դէմ չափ ու սահման ծրագրուի և խորշելի դառնան խիստ մանրամասն նրբութիւնների ծանուցումները: Բայց և այնպէս ինքը ուսուցիչը լաւ պէտք է իմանայ, թէ ինչ է նշանակում ճշդիւ սահմանել մի ուսումնական գաղափար: Ամենածայրագոյն հիմնական գաղափար (հաւասարութիւն, յաջողութիւն, միութիւն, տեղութիւն, ընդդիմադրութիւն, ցաւ և այլն), որովհետեւ վերացական և ընդհանուր է, միայն մասնաւորութիւնների միջնորդութեամբ հասկանալի է դառնում: Արդ ինչպէս պէտք է բացատրուի «զառանցանք կամ պատրանք զգայարանաց» բառը, եթէ կարգացած խօսքի շարքում յանկարծ պատահում է: Այնպէս, ինչպէս ամենայն ընդհանուր գաղափար հասկանալի պէտք է կացուցանուի: Հարկաւոր է երկու կամ երեք իսկական կամ երեւակայական օրինակներով բացատրել այնպիսի անձինքների վիճակը, որոնք մտացնորութեան ակտի հիւանդութիւն ունին: Բայց այսպիսի միջանկեալ բացատրութիւններով ընթերցուածքի թելը կը կորչի, ուրեմն նորա կամ դասի սկզբին պէտք է տեղի ունենան, կամ վերջը:

Վախճան բանի այս էլ աւելացնենք: Թէ ցանկալի է, որ գրքերից և դասերից դուրս ձգուին այնպիսի բառեր, խօսքեր և դարձուածքներ, որոնք դժուարացնում են ուսուցչի գործը և աշակերտի միտքը զուր կերպով ցրուում են: Եթէ մի ուսումնական ճարձատուն արտայայտութիւն գործ է դրուած իւր պարզագոյն նշանակութեամբ, նա աւելորդ բռն է, նորա տեղը կարելի է աւելի դիւրիմաց բառ դնել: Միւս կողմից շատ անգամ մեծ օգուտ ունի, որ մի ծանրակշիռ դարձուածք գրքի և դասի մէջ մու-

ճանուխ, եթէ առանց ձգձգելու կարող է շուտ հասկանալի դառնալ իւր իսկական նշանակութեամբ: Դէպքից օգուտ քաղելը իմաստութիւն է, բայց հարկաւոր է որ դէպքը շինովի և բռնադատած չը լինի:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ԿԱՐՍԻ ՂԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Շարահանութիւն):

Զ.

Տայլար.

Հոռոմոսից դէպի արեւելք, երեք վերստաչափ հեռաւորութեամբ Ախուրեանի պտոյտներից մի թերակղզու հրուանդանի վերայ, գտնվում է հիւսիսային կողմից հասարակ պարսպով պատած մի աւերակ գիւղատեղի և մի գեղեցիկ աւերակ գմբէթաշէն փոքրիկ եկեղեցի, որի հարաւային որմը քանդուած է: Ահա այս աւերակ եկեղեցին և գիւղն է որ կոչվում են Տայլար. Հ. Ալիշան կարծում է որ գիւղը, և հետեաքար, և եկեղեցին ամայացել է դարուս սկզբից լեկզինների ասպատակութեան պատճառով:

Ըստ ամենայն հաւանականութեան եկեղեցիս շինուած է Բագրատունեաց ժամանակով:

Եկեղեցուս անուանով կայ 615 դեռեատին հող, սեպհականուած Հոռոմոսի վանքին, բայց մինչև այսօր արդիւնքը աննպատակ կորել է:

Է.

Կարէր լինէ՞ր Ղալալեհ.

Տայլարից դէպի հիւսիս արեւելք, անցնելով Ղուլուջուղից, Թաղզայ գիւղից և Մատակից, մօտ վեց վերստ հեռաւորու-